



ԱՐԾՈՒՒ

ՎԱՄՊՈՒՐԱԿԱՆ

ԹԻՌՈՒՑԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕՔ
ՅԼՐԾՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՅ

ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅՐԵՆԱԽՕՍ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1858 . ԹԻՒ 10 .

ՎԱՆՏՈՍԳ

Ի ՏԳՎԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՑԵՆ
Ի ՎԱՐԱԳ.

7

1847
The following is a list of the
names of the persons who
were present at the meeting
of the Board of Directors
of the City of New York
on the 1st day of January
1847.

—
The following is a list of the
names of the persons who
were present at the meeting
of the Board of Directors
of the City of New York
on the 1st day of January
1847.

—
The following is a list of the
names of the persons who
were present at the meeting
of the Board of Directors
of the City of New York
on the 1st day of January
1847.

—
The following is a list of the
names of the persons who
were present at the meeting
of the Board of Directors
of the City of New York
on the 1st day of January
1847.



ԱՐԾՈՒՒ

ՎԱՄՊՈՒՐԱՆՆ

ԹՈՒՈՒՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԹԵՒՕՔ
ՅԱՐԾՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՅ
ՈՐ 'Ի ՎԱՆՏՈՍՊ

Ա. ՀԱՆԴԻՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ
ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ՀԱՐՅՆ

ԵՂԵՐ ԳՍԵՄԱՌՕՍ ՊԱՏՄԱԳԻՐ ՀԱՅՈՑ

Ի շարս լուսանորոգ դասու քաջարուեստ վարժապետաց
ոսկեղնիկ դարու հայկական դպրութեան, յետ քերթողա-
հօրն Մովսէսի, շքեղապանծ փայլի հռետորական ճարտարու-
թիւն անզուգական պատմագրիս ԵՂԵՐԻՒՆ՝ ԱՅՆ՝ որ 'ի
վարժս քաջի ուսման իւրոյ, ժրջան ընկերակցացն հանգոյն

Ճանապարհորդեալ յԱթէնս եւ յայլ Յունական իմաստաճոխ քաղաքս , ժողովեաց ըստ ժրաժիր աշխատութեան գործասէր մեղուաց զանազան ծաղկունս իմաստասիրական ուսմանց , եւ սիրողաբար հապճեպ հասուցեալ զայնս յիւրական աշխարհ , պարարել նորոք զքիմն թորգումածին մանկաւոյ :

Իայց իբրեւ ետես զՀայաստան ամենայնիւ կերպարանափոխ առաջի իւր՝ արիիափայլ փողփողունմն Արշակունեան թաղին՝ ընդ լրթագոյն պարսկական ամպով կայր նսեմացեալ Ս . Եկեղեցի Հայաստանեաց զրկեալ ՚ի Պարթեւական քաղի հովուէ եւ նորին հովուակցէ , եւ բազում չարիք անկարգութեամբ հանդերձ սրմատս ձգեալ ընծիւղին : Վասն այն գրնացեալ յարեցաւ յայրն երանելի ՚ի զօրեղ անոյեանն Եկեղեցւոյ Աստուծոյ ՚ի Մամիկոնեանն Վարդան , որոյ եւ էր մերձաւոր ազգական . եւ նորին հայրենաբիրտն վաստակոց ցանկացեալ յաղորդ գտանել՝ որոյ վասն եւ եղեւ նորին քառտիւղար , ընդ որ շրջեալ յամենայն աւուրս կենաց նորա ՚ի ժողովս ՚ի բանակատեղս եւ ՚ի պատերազմունս , բանիւ եւ գրով յարաժամ հետեւող գտեալ վսեմական եւ շնաշխարհիկ Կործոց նորին . իսկ զկնի նահատակութեանն նոյն երանելեաց , սա ըստ օրինակի թռչնեկին՝ որ կորուսանէ գիւղն վարձեման չկարացեալ եւս տանիլ բնակելով ՚ի մէջ բազմամբոխ խուժանին՝ յորս ոչ բնակէր ոգի լուսաւոր իմաստութեան . գնացեալ խտմբեր վարուք ճգնէր ՚ի հովասուն լերինս Մոկաց , իբր անծանօթ ոք :

Եւ յապէս հովիւն քաջ ըստ Երեմիայի սուք առեալ խռովէր ոչ ՚ի հայրենի տանէն եւ ՚ի ծննդոց նորին , այլ ՚ի բերմանէ չարագուշակ ժամանակին . յորում ողորմելին Հայաստան իբրեւ զծով մրրկածուփ տանջեալ տագնապէր յամենայն կողմանց . եւ պարսկադէն կատաղութեամբ զառնացեալ սրտմտութիւն կուրացելոյն Յաղկերտի բարձրանայր ՚ի վերայ :

Եւ որ փայլէրն լուսով իմաստութեան եւ որ կրէրն յինքեան զվարս հրեշտակական սրբանուէր մաքրութեամբ . զեարդ լինէր թագչիւ եւ անծանօթանալ . որ ամպ դժխեմ գօրէր

րին արիւնստփայլ լուսոյն ճառագայթ ընդ մթով պարապա-
տել . ոչ ապաքէն տէրունեան է վճիռ որ ասէ քաղսք չկարէ
թագչիլ որ 'ի վերայ լիւրին կայցէ . եւ ոչ ճրագ լուսալիւր լու-
ցեալ ընդ գրուանաւ պարածածկի : Այսպէս թէ եւ ըստ
իւրումն անփառասէր բարուց ծածկիլ ակործէր՝ թագչիլ ,
բայց համբաւ նորին սխալի եւ փառք զկնի արագէին , մին-
չեւ ետուն հայրենւոյ կրկին վայելել 'ի լոյս իմաստութեան
նորին : Որոյ վասն զիջեալ բազմաց սիրողաբար խնդրակաց իւ-
րոց , եկեալ բնակէ ընդ Արծրունեաց տամբ Աշտունիս : Ուր
եւ արդիւնաւոր աշխատութեամբ եւ ճգնողական պայծառ
հանդիսիւ լրացուցեալ զմնացորդս ցանկալի կենաց իւրոց՝
փոխեցաւ առ տարփալին իւր Քրիստոս : Որոյ մարմին յետ
սակաւուց գտեալ յառանձնական ճգնարանի մեծաւ հան-
դիսիւ ամփոփեցին 'ի վայելուչ տեղւոջ առ ոտամբ Արտուս լե-
րին . եւ 'ի վերայ բարձրացուցին եկեղեցի փառաւոր 'ի յիշա-
տակ անմահ անուան նորին եւ 'ի մխիթարութիւն ճգնողա-
կան հանդիսիւ խաչաչարչար զինուորաց Քրիստոսի . որ կայ
մինչեւ ցայսօր եւ կոչի 'Նարահան Սուրբ նշանի վանք : Իսկ
բարեպաշտ իշխանն Մոկաց եկեալ մեծաւ ջերմեռանդու-
թեամբ էառ զաջ ձեռ նորին եւ զգլուխն պատուական տա-
րեալ . եւ յառաջին տեղին ուր գտաւ յառանձնութեան 'ի-
կողմանս Մոկաց . ուրանօր եւս բարձրացոյց զեկեղեցի Սուրբ
եւ ուղղեալ սեղան սրբութեան :

Աս ըստ խնդրանաց Դաւթի երկոցու Մամիկոնէի արար
զհրաշալիս զայն պատմադրութիւն հայոց՝ 'ի նահատակու-
թիւն սրբոց Վարդանանց եւ Ղեւոնդեանց . անզուգական
շարադրութեամբ եւ ընտիր հայկաբանութեամբ . յորում եւ
փայլի պերճախօս ոգւոյ զօրութիւն քաջակիրթ հեղինակին
եւ բովանդակ գործ պատմագրութեան իւրոյ այնպէս վայե-
լուչ յարմարութեամբ է շարահար , որ առաւել համարելի է
բարոյական ամբողջ խրատ՝ քան թէ լոկ պատմութիւն անցից
անցելոյ . մանաւանդ յերկրորդ եւ 'ի հինգերորդ գիրս իւր
զորս սկսանի վսեմ Բարոյական եւ Աւետարանական վարդա-

պետութեամբս ասելով « Որոց ոգիքն թուլացեալ են երկնաւոր առաքինութենէ՝ յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ, յամենայն հողմոց շարժի յամենայն բանէ խռովի . . երազագէտ է այնպիսին 'ի կեանս իւրում եւ յանդիւտ կորուստն յուղարկի 'ի մահուն իւրում » :

Եւ թէ « Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր . եւ այնպէս աներկիւղս առնէ զմարդիկ իբրեւ զանմարմին զօրս հրեշտակաց » :

Առաջեւին են հեղինակիս նա եւ նկարագրական ձեւք մանաւանդ յեղանակն վեցերորդ . ուր իբրեւ զճարտար պատկերահան վրձին 'ի ձեռին նստեալ երեւի 'ի բարձր դիտանոցի Հաւարչական դաշտին եւ սքանչելի ճշգրտութեամբ նկարագրէ մէն մի խլրտմունս ահեղամոռնչ բանակաց, եւ 'ի ձեռն քաջարուեստ գրչութեան իւրոյ այնպէս պատկերացուցանէ զմեծ ռազմն, յոր յափշտակեալ միտք խորադէտ ընթերցողի, կարծի թէ ինքն եւս գլխովին ընդ զուարթնոյն Եղիշէի 'ի դաշտն Աւարայրի կացեալ առ ափամբ Տղմուտ գետով, ոհ տեսանէ որոշակի մէն մի քաջամարտիկ զինւորի զգիական դաւլահար եւ արիւնաթաթաւ ջրագլոր ընդ կարմրածուփ ալիս նոյնոյ դետոյն սահելով եւ գլորելով գնայ : Եւ 'իցամաքի շուրջ ածեալ զխրտուցեալ զաչկունս իւր՝ լսել լսէ տակաւին զմընջիւն անկելոց եւ զմռնչիւնս կարեւիք խոցելոց . լսէ եւս զփողել խիզախել քաջ նահատակաց եւ զբեկումն ուժգնապիլիկ լարից աղեղանց . լերինք եւ բլուրք Հայոց գոռալով տան արձագանդ եւ երկիր բացեալ զբերան ըմպէ զդառն վիժակս յորդաբուխ արեան քաջի դիւցազանց :

Բանակացն միոյն զօրավար Յիսուս ոսկեփունջ պսակ 'ի ձեռին եկեալ յամպս երկնից բլուրք հրեշտակօք՝ յինքն օրորղաբար ձգէ զոգիս քաջամարդիկն իւրոց զօրականաց՝ որք ապրեցան 'ի կոտորածէ թուիս գայլոց « եւ լուացեալ զկապուտակս հանդերձից » իւրեանց թեւ ածեալ ազաւնեւ նըման յինքն սլանալ դալ պատրաստին լի եւ պատարուն աննզրական խնդութեամբ զուարթ եւ ուրախ : Իսկ միւսոյն

սուր արիւնքուշտ եւ ահաբեկ սասանութիւն պարսկական արեւապաշտ Վեշտի, որ տաղնապաւ մեծաւ խուճապէ 'ի կուրստենէ 'ի կորուստ. փառք իւրեանց եւ յոյս 'ի վատութեամբ պարտութիւնն վերջանալ փողէ զօրավարն արիւնախանձ եւ սատանայ կալով դէմհանդիման խնծղանօք յափշտակեալ չարապատկեր զոգիս ուրացելոյ, խորասուզէ 'ի յատակս սան դարամետականաց :

Այսպէս պայծառ հանդիսիւ շարադասէ եւ այն ճառ որ յաղադս առաքինութեան երանելի կապելոց իշխանաց հայոց աշխարհին. եւ սքանչելի յորդորակ խրատն միանձանց :

Բաց 'ի սոցունց' են երանելոյս այլ եւս երկոտասան հատուածս բանից գրաւոր աշխատութեան. որք են .

Ա. Մեկնութիւն Յետուայ եւ Դատաւորաց տան եւ վեց գլուխս բանից լուսաւոր եւ ողջամիտ վարդապետութեամբ :

Բ. Բացադուրութիւն Տէրունական աղօթից Հայրմերի 'ի խորհրդաւոր միտս :

Գ. Ճառ 'ի Մկրտութիւնն Բրիստոսի :

Դ. 'ի Մատնութիւնն Բրիստոսի :

Ե. 'ի Չարչարանս Բրիստոսի :

Զ. 'ի Սաչելութիւնն Բրիստոսի :

Է. 'ի Թաղումն Բրիստոսի :

Ը. 'ի Յարութիւնն Բրիստոսի :

Թ. 'ի Սարսափելի դատաստանն համաշխարհական եւ 'ի յահեղահրաշ միւսանգամ գալուստն Բրիստոսի :

Ժ. 'ի Յիշատակի մեռելոց :

ԺԱ. Գովեստ 'ի համապատիւ Առաքեալն Բրիստոսի :

ԺԲ. Վասն դիւահարաց եւ երախայից հաղորդութեան :

Սայտոսիկ բովանդակ աշխատութիւնք սրբոյ մեծի Թարգմանիչ Հօրս, բազմաշխատ Հարք Վենետիկոյ 'ի մի Ժողովեալ 'ի 1838 աթի 'ի տիպ արձանացուցին, Թողլով բոլոր հայածին սերնդոցս յիշատակ անկորուստ : Ի եւ այլ գրաւոր աշխատութիւն երանելոյս՝ որպէս յիշի անդանօր, բայց դեռ չգտան ընտիր օրինակք նոցին, վասն այն մնան 'ի խոր լուութեան :

Տէս դու ինձ աստանօր ծնունդ թորգոմեան հորամոյն որդի , քանի՜ պայծառ փայլի հանդէս Աստուածպաշտութեան բլրաձառաստակ հօրս Եղիշէի . որ թէպէտեւ հանգոյն դասակցին իւրոյ Քերթողահօրն մեծի նստաւ 'ի լուծեան 'ի հայրենի իւրական 'ի տան , բայց փայլեցաւ նմին հանգոյն զարմանագործ հրաշիւք . փայլեցաւ անհամեմատ ճգնողական հանդիսիւ . փայլեցաւ հրաշադիւք գրաւոր աշխատութեամբ , փայլեցաւ ամենայնիւ 'ի վեր՝ քան զբազումս իւրային ժամանակի : Ուշ 'ի կարծիս բերեալ քաջ 'ի միտ առ զառ 'ի նմանէ ճառեցեալ երանելի նահատակացն առաքինութեան զհանդէս . որ 'ի սէր Սուրբ կրօնի եւ Հայրենւոյ անընկճելի ախոյեան հանդիսացան ընդ դէմ հրապաշտ տոգորման պարսկական անհեղ որոտմանց եւ առ ոչինչ համարեալ զանոտի փառս անցաւոր աշխարհիս եւ զմեծութիւն փաղաքօւշ , խրախուսեցին յԱստուած եւ գտան ժառանգորդ անմահ անուան եւ անզբաւ փառաց :

'Ի միտ առ զ'ի վեր քան զբնութիւն մարդկային՝ Երանելի հայկազուն տիկնանցն առաքինութեան զհանդէս ոյք . մոռացան գլխովին զկանաջի տկարութիւն՝ եղեն քաջ զօրականք առաքինիք եւ երկայնամիտ համբերութեամբ բոլորեցին զանթառամ պսակն երանական՝ եղեն օրինակ բարեաց , եւ լուսաւորիչ բազմաց յուսահատութեամբ նսեմացելոց :

Եւ ուրեմն եւ դու տակացեալդ 'ի սնոտեաց աշխարհիս եւ զգեցեալդ զբրիստոս՝ նմանօղ լի՛ր չնաչիւրսիկ Հօրս սրբոյ եւ Վարժապետիս վսեմաբանի . եւ առ 'ի նմանէ ճառեցեալ կրօնաւէր եւ ազգասէր առաքինեացն դասու . օծե՛ր իւղով ողջախոհ արիութեան եւ ուղղափառ վարդապետութեան . մնաւ յապարեղ , կաց ընդ դէմ ոխերիմ ախոյեանիդ , ոչ ընդ սեւադէմ պարսիկսն ասեմ , ուր մահ եւ արեան ճապաղիւք յորդեցին . ուր գտնեն Շաւարշական քսոմնելի տեսարանաւ , ուր Հայաստան մերկացաւ 'ի բարեզարդութենէն եւ եկեղեցի Աստուծոյ 'ի դարս երկար մնաց 'ի հալածման : Այլ ընդ ինքնաբեր կիրս հոգւոյդ մեռամարտեալ՝ յաղթօղ հան-

դիսացիր, ամենայն արտիւղի բերմանց նորին. մարտ յարդարեա ընդ գոռոզ հպարտութեան, յազկերտի. ընդ ունայնասէլ մուխալ բարուց՝ մոխրապաշտութեան. ընդ խաւարելոյ մոլեաւանդ. կրից, դաւնացելոյն միհրնէլսէհի. ընդ անաստուած յոխորտանաց եւ ամբարտաւանութեան, մուշկաննիւստլաւուրտայ. ընդ խաբեբայ շողումարարութեան, կուրացելոյն վասակայ. ընդ տատանման ողորմելի մտաց, ամբոխի ուրացելոց. իսո երանելոյն ասեմ. եթէ զհետ եկեացես զեղեցիկ խրատու ողջախոհ վարդապետութեանս. ապա » քաւ քեզ տարվից հեթեթանք, քաւ քեզ կապարձ աստղկորդոյն « յերկրի բարւոք զցանկալի կեանսդ տնօրինես, եւ ՚ի վախճանի թեւածեալ վերանաս ՚ի ընագաւառն Աստուածութեան :

Ա. Մ. Ա.

Բ. ՀԱՆՆԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱՇԷՆ ԱՌԱՔԻՆԵԱՑ

ԱՐԳԱՐ ԱՐՇԱԿՈՒՆԻ ՆԱԽԱՀԱՒԱՏ ԴԻՏԱԶՆ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ :

՚Ի մէջ բոլոր քրիստոնեայ թագաւորայ առաջին եւ անդրանիկն Աբգար, արդարեւ իր հեթանոսութեան մէջ եղած ժամանակը քրիստոնէավայել բնական ձիւքերով հեղութեամբ եւ իմաստութեամբ զարդարուած ըլլալով, իր սքանչելի բնաւորութեամբը բոլոր Հայկազանց սիրելի եւ դովելի եղաւ. որ իրեն աւելի մեծ պատիւ մը ըլլալու համար՝ իր առաջին աշունք փոխեցին եւ իր անստղիւտ եւ առաքինի վարուցը յարմար նոր վառաւոր եւ պանծալի անուն մը սահմանելով Աւագ այր անուանեցին. որ ետքը համառօտելով սկսեցին Աբգար ըսել, որուն Յոյնք եւ Ասորիք Աբգարիտս եւ կամ

կրնալով ճիշտ արտասանել Ագբար կրսէին : Այս մեծանձն առաքինի թագաւորը՝ իր հեղութեամբ եւ իմաստութեամբ բոլոր օտար ազգաց ալ սիրելի էր . եւ իր հանճարաւոր խաղաղասէր կառավարութեան պտուղը չէ թէ միայն մեր ազգը կը վայելէր , այլ եւ օտարազգիք ալ այսպիսի կատարեալ անձի մը կառավարութեանը կը փափաքէին : Ինչպէս որ մեր Խորենացին կը պատմէ այս . Հայրենայէն եւ միանգամայն աշխարհաշէն առաքինի անձին համար ըսելով թէ , Երբոր Պարսից Արշաւիրին որդին Արտաշէս եղբարցը դէմ դնելով ցեղապետութիւնը իրմէ սկսելով ուզեց որ թագաւորէ , անոնք ալ յանձնառու . չէին ըլլար , հետեւաբար իրենց ազգականացը եւ զօրացը մէջ մեծամեծ խռովութիւններ եւ անմիաբանութիւններ ծագեցաւ . ահաւասիկ մեծանձն Արդար այս պիտի երկարատեւ եւ արիւնահեղ պատերազմներու պատճառ տուող բազմակնձիւ շփոթութեան մը մէջ , իր հանճարեղ եւ իմաստուն կառավարութեամբը՝ բարեկարգութիւնը եւ խաղաղութիւնը հաստատեց անոնց մէջ , երդում՝ ընել տալով սահման դրաւ որ՝ Արտաշէս յորդուոց յորդի թագաւորէ մինչեւ իր ցեղին հատնիրը , եւ անկէց ետեւ իրաւունք հաստատեց որ միւս եղբայրները թագաւորեն . եւ իրենց թագաւորական ցեղին եւ թագաժառանգ ըլլալուն յայտնի պատիւ մը նշան ըլլալու համար , իրենց հռչակաւոր քաղաքին անունը վրանին դնելով Պահլաւ անուանեց զիրենք : Արդարեւ Սօլոմոնի խօսքը կատարեցաւ այն թագաւորութեան մէջ թէ « Իմաստութեամբ շինի տուն եւ հանճարով կանգնի » :

Եւ երբոր Հրէից վրայ թագաւորողն Հրովդէս՝ հրամայեց իր բարշէլի արձանը ամէն մեհեաններու եւս Հայաստանի մէջ ալ կանգնելու , Աբգար ալ բոլորովին յանձնառու չըլլալով՝ սխեց սաստիկ կերպով պատերազմիլ Հրովդէսի հետ . եւ իր դիւցազնական քաջութեամբը յաղթեց . եւ թշնամիք տեսնալով որ պատերազմաւ չկրցան եւ չպիտի կրնան յաղթել , սկսեցին վրան ամբաստանութիւն ընելով . եւ Օգոստոս կայսրը իւ

րեն հետ թշնամացընել . Աբգար ալ իմանալով այս չարութիւնը՝ անձամբ Հռովմ Կնայ, որ Օգոստոս կայսրը իր սիրելի եւ իմաստուն վարմունքը տեսնալով՝ աւելի մոտերիմ եւ խանդակաթ սիրով բարեկամացաւ հետը . այնչափ որ, Աբգարու իր քովէն հեռանալը իրեն մեծ տրտմութիւն պատճառելուն համար՝ բնաւ չէր ուզեր որ Հայրենիքը դառնայ . ինչպէս որ Պրոկոպիոս Յոյն պատմագիրը կը պատմէ թէ, Աբգար ալ մարդուս իր հայրենեացը վրայ ունեցած բնական սէրը աւելի Կործնական կերպով կայսեր յայտնի ցրցունել ուզելով ճարտասու հնարք մը Կտաւ . սյսինքն օր մը իր ծառաներովը որսի երթալով շատ մը վայրի կենդանիներ որջ որջ բռնել տուաւ՝ եւ ամէն մէկուն իրենց բռնուած տեղէն զատ զատ հողեր ստնելով Հռովմ բերաւ . երբոր իրիկունը Օգոստոս կայսրը թէտարն մտաւ, Աբգար ալ իր ծառայիցը հրամայեց որ բերած հողերնին զատ զատ տեղեր դնեն՝ եւ անկէց ետեւ կենդանիները մէկէն արձակեն . սակայ երբոր ըրին՝ ամէն մէկ կենդանի ինչ հողի վրայ մեծցած ու սնած էր առանց շփութելու հոն գնաց . կայսրը այս զարմանալի տեսարանը տեսնալէն ետեւ, պատճառը հարցուց Աբգարու՝ եւ իմաստուն ու հանճարեղ թագաւորին միտքը իմանալով, անոր գրտած գիւտին վրայ հիանալով ապշեցաւ եւ հրաման րրաւ որ իր տեղը դառնայ . եւ աւելի փառօք եւ պատուով ճամբայ դրաւ . թէպէտ եւ մեծ վիշտ եղաւ իրեն անոր հեռանալը, Եւ երբոր Աբգարու վրայ բորոտութիւն մը եկաւ՝ որ մարդկային հնարքներէն բոլորովին իր յոյսը կտրեր էր . այս միջոցին պատահեցաւ որ Աբգարու օգնութեամբը Հրովգէս Արեւոյն յաղթուելով, այն արդարասէր անձին վրայօքը զրպարտութիւններ ընելով սկսեց ամբաստանել Հռովմայեցւոց տոջէւ, Աբգար ալ ինքզինքը արդարացնելու համար Երուսաղէմի մէջ եղած Հռովմայեցւոց զօրաւորին Դեսպաններ խրկեց, որոնք այն տեղը Քրիստոսի բրած հրաշքները տեսնալով ու լսելով, եկան իրենց բնական կրօնասէր թագաւորին պատմեցին, որուն սիրտը երկնային եւ երկրային իմաստութեամբ լե-

Գրեթէ հաւատոյ պայծառ արեգական ճառագայթը մտքին
 մէջ ծագելով լուսաւորեցաւ, շերմեաւորութեամբ հաւատաց
 Քրիստոսի Աստուծոյ. եւ ուղեց որ իրեն զայ ու իր ցաւերէն
 բժշկէ զինքը : Ինչպէս որ Խորենացին կը պատմէ թէ Քրիս-
 տոսին նամակ խրկեց, որուն մէջ գրուած է թէ « Լսած եմ
 քու վրայօքդ որ՝ առանց դեղի եւ արմատի բժշկութիւններ
 կըլլան քու ձեռքովդ, ինչպէս որ հօջակուած է, եւ կըսեն
 թէ կոյրերուն աչքը կը բանաս, կաղերը կը քաղեցնես, բոլոր-
 ները կը սրբես, եւ չար դեւերը կը հանես ու կը հալածես,
 անոնք որ երկար ժամանակներով հիւանդութեամբ չարչա-
 լուած են կառողջացրնես, մանաւանդ որ դուն մեռելներն ալ
 կը յարուցանես. եւ երբոր լսեցի այս քու հրաշքներդ, հա-
 տատ միտքս դրի որ կամ դուն երկինքէն ինչա՞ծ Աստուած մըն
 ես՝ եւ կամ թէ Աստուծոյ որդի ես որ այդ հրաշքները կը
 նես : Հիմա անոր համար քեզի գրեցի եւ կաղաչեմ որչափ որ
 ձանձրութիւն կըլլայ եկ ինձի, եւ իմ ունեցած հիւանդու-
 թիւնէս զիս բժշկէ : Նա եւս լսեցի որ Հրեաները քու վրա-
 յօքդ տրտունջներ կընեն եւ կուզեն որ քեզ չարչարեն, ես
 փոքրիկ գեղեցիկ քաղաք մը ունիմ որ երկուքիս ալ բաւական
 է : Այս նամակը նոյն դեսպանները առին Երուսաղէմ տա-
 րին, ինչպէ՞ս որ կը վկայէ սուք. Աւետարանը թէ քանի մը հե-
 թանոսներ Յիսուսի հետ խօսելու չհամարձակելով, Փլլիպպոս
 եւ Անդրէաս առաքեալներուն յայտնեցին իրենց զախտեան
 սրաճառը. Քրիստոս ալ այն նամակին միջի գրուած հրաւե-
 րին յանձնառու չըլլալով, տրժանի դատեց նամակաւ իրեն
 պատասխանելու. եւ հրաման րբաւ թողման առաքեալին որ
 իր կողմանէ նամակ մը գրէ. որուն մէջ գրուած էր թէ, Ե-
 րանի անոր որ ինձի չտեսած կը հաւատայ. ինձի համար այս-
 պէս գրուած է թէ անոնք որ զիս կը տեսնան չպիտի հաւա-
 տան, եւ անոնք որ տեսած չեն պիտի հաւատան. եւ այն որ
 գրեր է իր թէ քեզի դամ, պէտք է ինձի որ ես այս տեղը ա-
 մէն բանը կատարեմ որոնց համար խրկուեցայ. եւ համ-
 բառնալէս ետեւ իմ աշակերտներէս մէկը կը խրկեմ քեզի որ

քու ցաւերէդ բժշկէ , բեզի եւ քեզի հետ եղողներուն ալ կեանք եւ կենդանութիւն շնորհէ : Այս նամակը եւ Փրկչական պատկերին ամենապատուական եւ ամենապանկալի կենդանագիրք՝ Աբգարու Անան սուրհանդակը Եղեմիայ բաղաբը իր Թագաւորին բերաւ : Եւ Քրիստոսի համբառնալէն ետեւ Թովմաս առաքեալը այն եօթանասնից մէջէն Թադէոս Քրիստոսի Սրբազան աշակերտը Աբգարու իրկեց . որն որ Թադէոսին երեսին վրայ զարմանալի տեսիլ մը տեսնալով , երեսին վրայ խշտալով երկրպագութիւն ըրաւ իրեն , որ իր քովի եղող բոլոր իշխաններն ալ զարմացան : Եւ Թադէոս ալ ձեռքը վրան դընելով բոլորովին բժշկեց իր հիւանդութիւնէն , մկրտեց եւ բոլոր քաղաքին մէջ Սուրբ Աւետարանը բարոզեց :

Այս նախահաւատ արքայն՝ Քրիստոսի Սուրբ հաւատոյն վրայ ունեցած ջերմ սիրովը վառելով , Տիբերիոս կայսեր երկու անգամ նամակ իրկելով ճշմարիտ հաւատոյ աւետիսը տալով իմացուց իրեն՝ Թէ Քրիստոսի Սուրբ հաւատոյ մարդու հոգւոյն եւ մարմնոյն ընծայած կեանքը , եւ Թէ իրենց հեթանոսական կրօնը ինչ ծաղրելի ըլլալը՝ եւ մարդու հոգին ու մարմինը ինչ անկարծելի թշուառութեանց մէջ թաղելը զգացուց իրենց : Մանապէս Ասորեստանի Ներսէհ Թագաւորին եւ Պարսից Արտաշէս Թագաւորին ալ նամակներ իրկելով Քրիստոսի Սուրբ կրօնքը հրատարակեց . վերջը բարի եւ երջանիկ մահուամբ մեռաւ :

Արդարեւ Հայաստան Քրիստոսի Տեառն մերոյ սկզբնադարին ժամանակը բարեբաղդութեամբ այնպէս Թագաւոր մը ունեցաւ , որ Քրիստոսի Սուրբ կրօնիցը հաւատացող հեթանոսաց մէջ անդրանիկ ըլլալով՝ երկնի եւ երկրի Թագաւորութիւնը արժանապէս ժառանգեց : Այս բազմատեսակ առաքիտութեամբ պայծառացեալ անձը չէ՝ Թէ քրիստոնէական սուրբ կրօնքը քարոզող առաքեալները հալածեց կամ նահապակեց , ինչպէս որ Ներոն Հռովմայեցւոյ կայսրը սուրբ Պողոս եւ Պետրոս առաքեալները չարչարելով խաչեց՝ ինչպէս որ ըրին ուրիշ Թագաւորներն ալ , հապառ ամենէն առաջ ինքն

հաւատաց Քրիստոսի, եւ անոր առաքեալին երկրպագութիւն ըրաւ, եւ ընդարձակ ասպարէզներ բացաւ անոր եւ իրեն աշակերտներուն որ՝ Քրիստոսի սուրբ հաւաքը աներկիւղ համարձակ քարոզեն. եւ ինքն ալ մէկ կողմանէ աշխարհիս զանազան թագաւորութեանց նամակաւ Քրիստոսի սուրբ հաւատքը քարոզող մունետիկ եղաւ որ, բոլոր ազգային պարծանքներնուս վրայ երեւելի պարծանք մ'ալ աւելցուց :

Ահաւասիկ այս այն թագաւորն էր որ, Օգոստոս կայսրը անոր հետ կենակցիլը իրեն մեծ երջանկութիւն մը համարած էր, հապա որչափ եւս առաւել Հայկազունք երջանիկ էին անոր օրովը որ, անանկ լուսաւորեալ միտք ունեցող հօր մը թագաւորի մը պաշտպանութեանը տակը կը կառավարվէին :

Տես անգամ մը Աբգարու գովելի հայրենասիրութիւն ալ. դիտէ՛ որչափ սաստիկ սէր ունէր իր երկրին ու ազգին վրայ որ, զօրաւոր միջոց մը գտնալով պարտաւորեց Օգոստոս կայսրը կամայ ակամայ զինքը թող տալու՝ ու գէպի իր հայրենիքը ճանապարհի գնելու : Արդեօք իրաւունք չունէ՞ր այնպէս երկիր մը ազգ մը սիրելու որ, Հռովմայեցիք միշտ սիրելի երկիր սիրելի Հայաստան կըսէին . միթէ իրաւունք չունէ՞ր Աբգար սիրելու այն երկիրը, որ բոլոր մարդկանց խանձարուն եղած է, եւ Աստուած ալ իր արարածներուն մէջ ամենաընտիր անգուգական արարած եղող մարդուս համար՝ բոլոր բարութիւնները ստեղծելէն ետեւ, երկրագունտիս ամենէն ընտիր գեղեցիկ եւ առողջարար կողմը բնակեցուց՝ որ է հռչակաւորն 'Իբարութիւնս ցանկալին Հայաստան : Ահաւասիկ այս այն երկիրն է, որ ժամանակ մը աշխարհիս վրայի եղած հրաբուխներուն նման կը վառէր կը գոռար, բիւրաւոր միլեօնաւոր Հայկազունք իրենց հայրենեօքը թագաւորութեամբը կը պարծենային կը փառաւորվէին, եւ բոլոր աշխարհի սուջեւ իր հզօր զօրութիւնը հռչակուած էր : Ահա այս այն սիրելի երկիրն է կըսեմ որ՝ իր պատուական բարեբեր հողէն եւ ընտիր ընտիր բարեհամ եւ սուստ ջրերէն, առողջարար եւ բարեխառն օդէն արտադրեալ գեղեցիկ բոյսերէն ծաղկըներէն յա-

իսկ եկած բերքերովը, անթիւ երեւելի պատուական վաճառականներուն հարստութեան նիւթ կընծայէր . որոնք իրենց ազնիւ բերքերը ոմանք գրաստաբարձ երկրին վրայէն՝ ոմանք ալ նաւերու մէջ լեցունելով գետերուն եւ ծովերուն վրայէն հեռու օտար երկիրներ երթեւեկութիւն ընելով բոլոր ազգաց կը նուիրէին իրենց երկրին եւ միանգամայն Հայկական քրտանց եւ աշխատութեանց երախայրիքը . եւ այսպէս ամբաւ հարստութիւն կը դիզէին . որ մինչեւ անգամ ժամանակ ժամանակ ազգերնեւս վրայ բռնակալութեամբ տիրող Պարսկիք եւ Արաբացիք ալ կը զարմանային ազգին անսպառ հարստութեանը վրայ . երբոր անիրաւ պահանջմամբ չափազանց տուրքեր կը պահանջէին , ամէն ժամանակ կարող կըլլային վճարելու : Ահա այս այն երկիրն եւ ազգն է որ՝ այն ատենի եղած զանազան արհեստներու տեղեակ արհեստաւորներով զարդարուած էր , եւ սկիզբէն ՚ի վեր մինչեւ այս օրս ալ յայտնի է թէ արեւելքի բոլոր քաղաքներուն մէջ եղած արհեստաւորները եւ վաճառականները միշտ աշխատասէր Հայք եղած են : Բայց ափսոս որ նոյն ջանասիրութեամբ տակաւին Եւրոպացւոց հանճարաւոր գիւտերը ու արհեստները ձեռք ձր գելու բարեբաղդութիւնն ու երջանկութիւնն ստացած չեն : Ո՛ր է այն ազգայիններով լցուած Հայաստանը, որոնք որ իրենց բնական եղած հիւրասիրութեամբը սիրով կընդունէին օտարականները կը պաշտպանէին եւ անոնց երկիր կալուած տեղ բնակութիւն տալով կը պատասխարէին, բայց աւանդ որ հիմա բոլորովին իրենց երկրէն հեռացել են . հիմայ իրենք ու ընչներուն հիւրասիրութեանը ու պաշտպանութեանը կարօտ մնացել են . ասկէց ալ աւելի ցաւալի վիճակ չ'իրնար ըլլալ : Այն հայկազունք՝ որ բոլորովին իրենց Հայրենիքը մոռցել են եւ չէ թէ իր հայրենիքին այցելութիւն ընող ազգայինի մը նման, գոնէ իբրեւ օտարական՝ հետաքրքրութեամբ հայրենեաց ցանկալի եւ զուարճալի աւերակները տեսնալու համար անգամ այցելութիւն չեն ընել . իրենց մաքէն բոլորովին մոռցուել կորսուել է անոր յիշատակը . այն հայրենիքը կըսեմ որ

տարազգիք միշտ ճանապարհորդելով՝ անոր կիսակործան քաղաքներուն բերդերուն պալատներուն տաճարներուն հոյսկապ եւ զարմանալի ճարտարութեամբ շինուած շէնքերուն զարդերը եւ վայելչութիւնները տեսնալով կը զարմանան ու կ'աիշին . եւ իրենց ազգերնուն մտացը մէջ լուսաւորութեան մաս մ'ալ աւելցնելու համար, աւերակներուն պատկերներովը ստորագրութիւններովը ու ծանօթութիւններովը տպուած գրքեր հրատարակելով եռանդնին կը շարժեն . որոնք անձամբ այս հնութեամբ զարդարուած երկրին մէջ միշտ ճանապարհորդելով եւ այն սքանչելի տեսարանները տեսնալով, յայտնի կերեւակային կը ցաւին եւ սրտերնին կը շարժի մտածելով որ , այս ազգը առաջ ինչ փառաւոր վիճակի մէջ է եղել՝ եւ հիմա ինչպէս այն հրաքուիս լեռներուն նման մարեր անցեր է , եւ ժամանակաւ իր ինչ երեւելի հրաքուիս ըլլալուն մեծ նշան իր բովի եղած լաւաներուն քարերը միայն մնացեր է , որք են հոյսեւեաց երեւելի յիշատակները եւ ազգային պատմութիւնը :

Տ. Վ. ԳԱԼՓԱԿՃԵԱՆ .

ԾԱՆՈՒՅՈՒՄ

Էտեւեալ նամակը՝ մեր Մեծայարդ սիրելի եւ ազգասէր բարեկամն խրկած է , որ տաճկերէն լեզուաւ գրուած ըլլալով՝ անոր բացայայտ եւ գործածած գեղեցիկ ոճերուն յարգը տաճկերէն լեզուին վարժուած ազգայնոց շատերը շատ ահէկ կը հասկնան . Արեւորէ իր ազգափրական ոգւոյն աղնիւ եռանդէն արտադրեալ վեճ մտացը գեղեցիկ իմաստները եւ ընտիր խորհրդածութիւնները իր գրութեան մէջ յայտնի կերեւան . որ ազգին ուր եւ իցէ յառաջագիմութեանը դէմ արգելք եղող տղիտութեանը վրայ շատ կը ցաւի . եւ Եւրոպայի կրթեալ ազգաց առաջին բարբարոսութենէն բոլորովին փոխ-

վելով ինչպէս քիչ ժամանակի մէջ դիւրութեամբ կրթուելին յիշեցնելով աւելի աշխուժութեամբ մը կըսէ թէ, ասանկ լուսաւորեալ դարուս մէջ միայն մեք պիտի ըլլա՞նք տգէտ մընացող ազգ. անոնց առաջին վիճակը եւ մեր ազգին ընդհանրութեան հիմակուան վիճակը մէկզմէկու հետ բաղդատելով, ընտիր դատողութեամբ յորդորական հետեւութիւն մը կը հանէ, թէ ազգերնիս այն բարբարոսութիւնը 'ի բնէ չունենալով՝ որչափ ամէնէն աւելի դիւրագոյն է անոր վրայէն տգիտութեան կեղեւը վերցընելը. այն հին ազգն է կըսէ այս, որ ամէն լուսաւորեալ ազգերն քննած դիտած են եւ կը վկայեն, որ ամէն տեսակ կատարելութիւններ ձեռք ձգելու կողմանէ ուշիմ եւ յաջողակ է : Գեղեցիկ բանաստեղծական ոգով մը Հայաստանի անշքութիւնը եւ տղիտութիւնը փշալեց անապատի՝ եւ լուսաւորութիւնն ու դիտութիւնը վարդի նըմանցունեցէն հոսեւ՝ անոր մեծամեծ ապագայ երջանկութիւնները յայտնելով, ազգայնոց երեւակայութեան եւ սրտին մէջ ողբասիրութեան եռանդուն կրակը կը վառէ . եւ ազգին ընդհանրութիւնը շուտով յառաջադիմութեան մէջ մտնալուն համար՝ այն երկու գլխաւորաբար հարկաւոր եղած ընտիր միջոցները առաջարկելով կըսէ, այսինքն մէյմը որ ազգին համար անձնանուէր եւ ազգասիրական ոգւով եռանդուն ծառայութիւն ընողներ պէտք է որ՝ (մեր անարժանութիւնն ալ օրինակ բերելով իր ազնիւ ոգիէն արտադրեալ տեսակ տեսակ գովութիւններն ալ իր գլութեանը աւելորդ մասն է) . եւ երկրորդ կըսէ՝ Հայրենասիրաց դրամական օգնութեանցը՝ կարօտ ահաւասիկ այս երկու միջոցներով ազգերնիս քիչ ժամանակին մէջ անկարծելի կերպով շատ տեսակ տեսակ յառաջադիմութիւններ ձեռք ձգելիքը երեւակայելով, մեծամեծ յոյսերով շատ ուրախ կըլլայ եւ ազգն ալ կուրախացնէ. եւ շնորհակալ եմք որ միանգամայն մեր տկարութիւնն ալ սփոփելով թէ բանիւ թէ գրութեամբ եւ թէ դրամական օգնութեամբ աւելի յօրութիւն եւ յորդոր կուտայ մեզի՝ որ իր ազգասիրութեամբը եւ միանգամայն առատաձեռնութեամբ եւ բարեպաշտու-

Թեամբ իր կենդանեաց եւ բարեյիշատակ ննջելոց հոգւոյն յարգի ազգասէր սիրելի բարեկամ Փափազեան Տէր Յօհաննէսի քեռորդի ուսումնազարդ Պարոն Գարեգինին ձեռքով 1856 էն սկսեալ մինչեւ այս տարի ամէն մէկ տարւոյն համար 500 ական ղուրուշ յանձնած է՝ Մեծապատիւ Եազըճեան Պօղոս աղային . որ այս երախայրիքը կընծայէ Ժառանգաւորաց դպրոցին եւ Տպարանին . եւ դարձեալ կը խոստանայ ամէն տարի մինչեւ 'ի մահ 500 ական ղուրուշ տալու :

Արդարեւ ասանկ առատասիրտ ազգասիրաց արդեամբը Հայաստանի բարեբեր երկրին մէջ ցանուած սերմերը , յոյս ունիմք որ բիչ ժամանակէն Աստուծով միոյն հազարապատիկ եւ բիւրապատիկ գիտութեան ծաղկով զարդարուած պտուղներ ընծայելով ուրախացընէ եւ երջանկացընէ պիտի բոլոր ազգայինք : Եւ այսչափ երկար ատէն թէ ծուլութեամբ եւ թէ տեսակ տեսակ դժբաղդ պատահմունքով թշուառութեամբ անցուցած դարերուն մէջ տգիտութեամբ եւ անկրթութեամբ ստացած ամէնապարսաւելի աղտը անունը՝ իր այս սօրվան օրս ունեցած ջանասիրութեամբը եւ ուսումնասիրութեամբը իր վրայէն դիւրութեամբ վերցնելու վրայ է . եւ գիտութեան ամենափառաւոր եւ վայելուչ զգեստովը լուսաւորութեան կողմանէ ալ համբաւաւոր ըլլալու հանդէսին մէջ պիտի մտնայ : Այս բարեպաշտ անձը իր առաքինութիւնը համեստութեան քողով ծածկել ուզելով չուզեց որ իր անունը հրատարակեմք :

ՆԱՄԱԿ

Պերապատիւ Ազգասէր Հօրդ Աջոյն Սրբոյ մատուցանեմ համրոյր խոնարհական :

Լիվլէլա մեքթուպում պիւթիւն միւստէթը էօմրիւմտէ քալպիմի մէմնուն իտէն պիր մահզունիյէթին սէպէպինի իֆատէ իտէճէք . վէ շիւպհէմ եօք բի՝ սիզէր տափի օլ մահ

գաւնիւթիւնի աղւնա ալեւա՛ն օլտըղընըգտա՛ թէէսսիւֆիւմ
տ'ն միւթէէսսիֆ օլաճաքսընըղ . զիրա պէնի ատէմէ քէնտի
վեթանընըն լիսանընը օգուճադ՝ եազմադ՝ վէ սէօյէմէք պէօյ-
իւք պիւ պօրճ իսէ, պէն օ պօրճուէն էտաար էսնաարնտա՛ հայ-
ըֆլաւր օլսուէն նիլէ՛ նիլէ՛ սէպէպլէրի մէպնի՛ թէտարիքսիզ
պուլունմուշմ տըր . վաթթըմ կէչմիշ՝ եանղըն պաճայը սար-
տըքտան սօնկրա ագլըմա կէլիօր քի, պու աթէշի սագընմադ
իչիւն՝ էլտէ սու հազըր եանընտա պէքլէմէլի իմիշ : Ա գլըմ՝
պաշըմա կէլտիղի էսնատէ, պէնտէնիղին տախի՛ սէհվլմի տօղ-
րուծմայա թագաթ քալմամըշ ըտը, զիրա (աղաճ եաշ իքէն
տօղրուլուր), իշթէ մահզուէնյէթիւմ, իշթէ Հայրենիքիմին լի-
սանընտան եազամատըղըմ՝ իչիւն գալպիմէ զուհուր իտէն
թէէլլիւմ : Լաքին աճապա, պու քուսուր եանընըղ պէնիմ՝
մի, խայըր . միլլէթիմիզտէն եիւզտէ սէքսէնին քի՛ վեթան քի-
թապէթինէ աշնա օլմատըղլարընտան սարձը նազար, էլֆա-
զլար հագղընա պիլէ՛ միլլէթը ախէր լիսանընա միւհթաճ օլ-
մուշար տըր . իշտէ Ֆալկէթլիւ Փէտէրիմ, իշթէ պէնիմ
թէէսսիւֆիւմին սալը : Բէճա էտէրիմ, պու մէթթուպու
թիւլքճէ կօրտիւկիւնիւզտէ թամաճիւպ իթմէյէսինիզ, զիրա
էլտէն կէլէն պու գատար տըր :

Երծուի Վասպուրական իչիւն « Տարէլան նոէր » տա-
վէթինի իթտիղնիզ կիւն, Իւքիւտարտա Սուրբ Խաչ եկեղե-
ցինին ատեանընտա՛ միլլէթ սէատէթինէ արզուքէշ գալպինի-
զի՛ օրատա մէճմու ժողովուրդուն հուզուրընտա արղ էյլէ-
տիկինիգտէ, պէնտէնիզ՝ ֆիքիւր կէօղիւ իլէ ֆէրք էթտիմ, օլ
աղիզ գալպինիգտէն ճիրտան իտէն աշգըն սահիհիղինի . նուրը
այնըմ իլէ կէօրտիւմ եիւզիւնիգտէ վագըթ վագըթ հասըլ օ-
լան մահզուէնյէթ վէ մէսրուրիյէթ . մահզուէն օլուր ըտընըղ՝
պաշլայաճադ իչինիղի քարշըլայաճադ նահագգ կիւճլիւքլէ-
րին թէֆէքիւրլէրի իլէ . վէ մէսրուր օլուր ըտընըղ՝ սէվկիւ-
լիւ Հայրենիքիմիղին՝ կէլէճէք զէմանտէ մազհար օլաճադ
սատէթին իւմիւտլէրի իլէ . իշթէ օ տագիգէտէ՛ պէնտէնի-
ղին ֆիքիւր տէ Հայրենիքիմին էյլիկի զըմնընտա՛ աղիմ միւլ-

հազարարա վարտը , վէ օլ տապիգէտէն պաշտաւորմ' սիգին արգունուզ իլէ պերապէր եանմայա . վէ կերչէք սէօյլէրիմ պու արգունուզ , պու աշգընըզ' պիր նէվի աթէշ տիր բի , Հայաստանըն ինսիզ օլաւարա թէպտիլ օլան մահալէրին քաւրա թիքէնլէրինի եազըպ քիւլ իտէճէք , վէ պիլու աղ սօնկրաճա' օրալարտա սօլմազ կիւլ զօնչէլէրին աջըմասընը կէօրէճէյիզ . էվկէտ Փէտէրիմ , իպթլտա սիզ միւսթահազիք օլաճագսընըզ' օլ զօնչէլէրտէն միւզէյեէն թաճը պաշընըզտա թաշըմայա . օլ պաշը ատէրիմ բի' կիճէ կիւնտիւզ քէնտի վէթանընըն սէլամէթինի տիւշթէնտի , վէ օնըն էլինտէն թոււթ տը պյագ իւսթիւնէ գալտըրմագ իւշիւն :

Ի'մտի Հայր Սուրբ , պէնիմ գալպիմտէ պիր եարա տահա վար տըր , վէ պու օ եարա տըք քի' սիզ օնուն էսէրինի քալտըրմապ սէվտասընտա քալքըշտընըզ , վէ ճէնապը հագգըն ալն ու իհօանը իլէ միւրաաթընըզա էրէճէքսինիզ . “ Տգիպս-Իի-ն Տգիպս-Իի-ն . ” իշթէ պիգիմ երգըմըմըզ . իշտէ պիգիմ տիւշմանըմըզ . լաքին աճապ քապիլ տէյիլ քի , պու տիւշմանը միլէթիմիզտէն թարտ էտէլիմ , պու տիւշմանըն էսէրինի' իւլա ախըրը տիւնեա եանըմըզա օղոթթմայալըմ , էվլէտ նիշիւն քապիլ տէյիլ . էկէր ինքան գըսմը թէրպիյէ գապուլ իթմէզ օլայրտը , Ամէրիգանըն ահալիսի' պու գատար աղ վապթըն իչինտէ' կէրէք իլիմճէ , վէ կէրէք տէվլէթճէ պուգատար իլէրի կէլթէյէճէգլէր իտի . թէրպիյէ գապուլ իթմէզ օլայրտը' հէր կիւն կէօրաիւզիմիզ' տաղարտան թօփաւնըմըշ եապանի ատաւլար թէրպիյէ օլմայաճագըրըրտը . բի պու կիւն' քէնտի սաղարնտա ճէվլէլան էլլէտիլէրի տիլքէշ ահէնէլէրի իլէ' գալպիմիզի մէսուր էտէյօրլար . Յրանսըզ միլէթի' թերպիյէ օլմատան էվլէլ , հաքէզա Բուսիայ միլլէթի' պուլնար պիրէր թէրպիյէսիզ բարքարոս' տաղ առէմէքի իտիլէր . տէմէք օլուր քի , ինքանըն թէրպիյէ քապուլ էթմէզի օլմազանճագ օ թէրպիյէյի քէսպ ու թահալլ էթտիրմէնին եօլունը պիլմէլի . վէ պու արգուտա պուլունան ատամն տա ուղուրա միւհթաճ օլտըզը պի իշթիպահ տըր , էօյլէ իսէ' եալընըզ պիզ

մի օրույօրըզ « Կրթն-Լի-ն » դապուռ իթմէզ միլլէթ պիզ մի
օլաճաղըզ պու տիւնեանըն շէն վաղթընտա եալընըզ խոյրաթ
գալան . ախէր միլլէթլէր՝ պիզիմ իչիւն շէհատէթ վէրիլլէր
քի , էրմէնի միլլէթի կիպի՝ ադլէ էվվէլ պիր էսկի միլլէթ
հոգ տըր : Լաքին եաղըզլա՛ր օլտուն . արգումուզ տէրունտէն
խտ տէ՝ արգումըզ սէքտէ օլան նէսնէլէրի քալորմայա լիւս-
գաթըմըզ եօք տըր . զիրա հէր հանկը իշէ էլ աթար իսէգ
» Տֆէր-Լի-ն » պիզի գարշըլայօր : Կէօզ եաշը տէօքմէտէն
պու էքսիկիմիզի սէօլէյէմէմ . պու էքսիկի տէրիմ քի սէպէպ
վէրմիշ տիլ՝ չօք իւմիւտլէրին մահվ օլմասընա . չօք ազճէլէ-
րին պիւհուտէ թէլէֆ օլմասընա . չօք մէքթէպլէրին քաբա-
նմասընա : Իշթէ փէտէրը ազիզիմ, պու տըր պէնիմ եարալա-
րըմին սէպէպի . քի եափա պիլտիղիմիզ իշի եափամայօրուզ . վէ
եախօտ (եափըլմազ քիմ եափաճազ) տէյէրէգ տայմա կէրի
դալմատայըզ . վէ պունլարըն եալընըզ սէպէպի « Տֆէր-Լի-ն »
տըր :

Հայր սուրբ , սիզ էյի պիլտինիզ թանրոնըզ պու Փագըր
միլլէթին երգըմընըն սէպէպլէրինի , վէ Ալլահ ազիմիւշան
հաղթթլէրին ինայէթինէ կիւվէնէրէգ՝ Հայաստանը՝ քէնտի
ունուտուլմուշ մահվ օլմուշ սալթանաթընա վէ շէրէֆինէ
նայիլ իթմէք իչիւն՝ միլլէթ աշգը իլէ թուլթուշտունուզ , սի-
զին էմէկինիզ միւպարէք օլա . շիւպհէմիզ եօգ քի՝ սիզտէ
պու արգու վար իքէն , վէ միլլէթիմիզտէն տէ իմտատ վար
իքէն՝ սիզ միւրատընըզա փէք չափուկ էրէճէքսինիզ . սիզին
վասէթանըզա փէյտա օլան « Լոսա-որ-Լի-ն » ըլլգկեարլա-
րը՝ « Տֆէր-Լի-ն » տիւմանընը դօլալայըպ մահվ էթտիքտէն
սօնկրա՝ օլ ինսիզ օլալարըն սիւքիւթ մէզարլարընտա ուլու-
լան Հայաստան էվլատլարընըն ունուտուլմուշ քէմիկլէրինէ
էսիպ՝ միւթտէ վէրէճէք քի՝ (ուլանըն վէթան էվլատլարը) ,
Հայաստանըն տէրտինէ չաքէ պուլունտը . Հայաստանըն սիւ-
քիւթ մահալլէրի իլիմ սէտալէրի իլէ էօթմէյէ պաշլատը . եր-
գըմընըն եկեղիցիլէր եափըլտը . ախօրա թէպտիլ օլմուշ մէք-
թէպլէրին քափուտունտան՝ իլիմսարլարըն քիւմէսինին չըք-

տըղընը կէօրիւյօրլար . հայրենասիրութիւն տէրսինէ հէր քէս տէվամ խոյօր : Ույանըն , հէյ միլլէթ քահրինտէն տիւնեա նըզը ախրէթէ թէպտիլ խտէն զավալըլար . սիլզքի ճան չէրի չիր իքէն՝ միլլէթին քէօթիւ հալինէ ախ վախ խտէրէք ճանը նըզը թէսլիմ իթտինիզ . ույանըն , կէօրիւն , էկէր սիլզ օ մէշա . գգաթլարը միլլէթ ուղուրընա չէքտինիլ խտէ , կէօրիւն սիլզին էվլաթլարընը տա սիլզին էսէրլէրինիլտէ պու սաաթտա՝ սիլզին արզու չէքտիլինիլզ « ~~Լուսա-որո-թիւն~~ » հիւսնիւ իքտամ իտէրէք , Հայաստանըն եէնի պաշտան շէնլէնմէսինէ ա սաա օլտուլար : Ախ ալլահ , սէն պիլզի պու արզու-մուլա քա վուշտըր :

Լ. յ Փետէրը ազիզիմ , աճապ պու մէսէրրէթ եայընըզ սիլզին եէտինիլ իլէ օլա պիլի՛ր մի , օլա պիլէ՝ զայլէթ ուղուն միւտաթէ միւհթաճ տըր , պէօլլէ՝ պիր թարաֆըն աքլի եարտըմը կէրէք տիր . վէ տիկէրին տէ սքճէ իլէ իմտատը լազըմ կէլիր , շուսը տա սէօլլէյիլքի՝ իհթիմալ տըր աքճէնին չարէսի , լաքին զաթը շէրիֆլէրի կիպի՝ միլլէթ ուղուրընա չալըշան՝ փէք նատիր պուլուրըր . առճագ պու սիւրէթտէ սիլզ՝ միլլէթտէն ախէր պիր շէյ պէքլէմէսինիլզ ագճէճէ միւ ալլէնէթտէն մատէ . պէնտէնիլզ՝ պու լուղու-մուլուլը մին զայրի հատտին թանըտըմ . օլ սաաթտա բի՝ սիլզէր հուգուրը իլահիտէ՝ վէթան իչիւն չալըշմանըզը բէնտիլիկինիլտէն թաւահիւտ իթտինիլզ . օլ ազիլզ սաաթտա՝ պէնիմ խղճմտանքըմ պանա թէպէլաշ օլուպ , զանն էտէրսին քի՝ պիր հիքմէթլէ բէնտիլի պօրճլու զանն էթտիմ , զաթընըզըն միւպաշիրէթ ի տէճէք իշինէ՝ բուտրէթիմէ կէօրէ մէտար օլմաղա . պու միւհհաղա իլէ Պուրը Անմահ Պատարաղ հուգուրուլտա ահու էթտիմ քի՝ ճէնապը Ալլահըն նիյաթի իլէ՝ էօմրիւմ վէ վապթըմ՝ օլտըքճա , կէրէք նընջեցեալարըմըն՝ վէ կէրէք պէր հայաթ օլտն էթրաֆըմըն սէլամէթի ինչիւն՝ պէհէր սէնէ պէշէր եիւզ զըրուշ սիլզին գովիլի նպատակա մէտար օլմագ եիւզրէ էտա էտէյիմ . նասրլ քի 1856 սէնէսի նոյեմբէր 1 թարեխի իլէ 500 զուռուշ պու թարաֆտա ֆէթու-

վէթիւ ետպըճը Պողոս Աղայա էտա էյլէտիմ. վէ ումարմ
քի թարաֆը շէրիֆինիդէ վասըլ օլմըշ տըր :

Եւ Փետէրը ազիզիմ , լեճա էտէրիմ. պու պէնիմ նաչիզ
վէրիմի ճան ու կէօնիւտէն քապուլ էտիւպ, պէնի տէ սիզին
սէվտիղինիզ. Հայրենասէրլէրին սըրասընա կէօնիւտէն քայտ
իտէսինիզ. օլ Հայրենասէրլէրի տէրիմ քի սիզին գալպինիզ տէ
ունուտուլմազ տըրլար . վէ կէրէք տուվանըզտան վէ կէրէք
պիւթիւն էօմիւնզիտէ ֆիքրինիզ տէն չըքմազար. պէնիմ քալ-
պիմ սէ Հայրենիքիմին պու անէ քատար չէքտիղի նահագգ
ազապլարն թէֆէքքիւրլէրինտէն եարալանմը՝ եարասընա
ախէր պիր տէվա պէքէմէզ . իլլա էվլէլճէ Հայրենիքիմին
սաստէթի վէ սիզ կիպի ազիզ Փետէրին տէրունի տուվասը ,
պունտան սօնկրա պունլարըն իքիսի օլաճաք՝ պէնիմ էն միւ-
թէնա թէֆէքքիւրլէրիմ , պունլարըն սէպէպինտէն սէվինիպ
մէսրուր օլաճաղըմ. վէ Հայրենիք լուսաւորութիւնը իլէ միւ-
լէթիմին անընտա գարա եազըլար իլէ եազըլան տգիտու-
թիւն լուղէթիւնին սիլինմէսինի կէօրէճէկիմ :

Պու սըղուլարըմա պիր էյիճէ վասըլ օլմտդ իւչիւն՝ փէք
լէճա էտէրիմ քի՝ կէրէք ժառանգաւորաց դպրատունըն ,
կէրէք տպարանըն , վէ կէրէք գանատլարընտան էօփտիւղիմ
Երծուինին հէր պիր աշվալինի, սէնէտէ պիր իքի տեֆա մէք
թուպ իլէ պէնտէնիզէ իշար իտէսինիզ քի՝ Հայրենիքիմին
յառաջադիմութիւնըն հավատիսլէրի իլէ սէվինէյիմ. օլ Հայ-
րենիքի տէրիմ քի՝ տամարլարըմտա ճէվլէան իտէն քանըն էն
սօն տամլասընը պիլէ՝ ուղուրընա էսիրկէմէմէյէ քէնտիմի
պօրձըլ թարընմըշըմ :

Մնամ Սըբութեան ձերուլմ ջերմեռանդ արթից յոյժ կարօտաւոր

ՅԻՒՄԻԻՏԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ

ՀԱՅՈՒՋԳԻ ՈՄՆ :

Դ. ՏԵՍԱՐԱՆԻ ԿԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՑ

ԱՆՏՈՍՅԱՆ ԱԿՈՓԻ .

Ուն բաղաբի Այգեստանեայց հիւսիսային կողմանէ երեւելի է Ալ-Իլ ըստած քարաղանգուած լեռնաբլուրն՝ որ ունի իւր մէջեր քանիմը նախնական մեծագործութիւնք . որոնց երեւելին է Մհերի Դո- ըստած ամենամեծ բեւեռագիր արձանագրութիւնն : Ասիկայ քարաժայռիմը ՚ի հարաւ դարցած սիրան՝ 8 ոտնաչափ խորութեամբ հոյակապ դրանմը ձեւով փորուած մի է . որ ունի 18 ոտք բարձրութիւն եւ վեց ոտք 3 մատ լայնութիւն : Այս դռնաձեւի ողորկ ընդարձակութեանը մէջ ալուեստաւոր ճարտարութեամբ բունդակուած է 80 տող բեւեռապիր . որուն ստորին մասը աւելորդապաշտից մուրձերով շատմը եղծուած է . զի կարծեն նոյն անմիտներն թէ՛ այն արձանագրութիւնն իսկապէս դուռ է եւ իւր ետեւի կողմնալ անբաւ հարստութեան հին քանձեր կան դիզուած :

Ղանդութեամբ առասպել մի եւս կ'պատմեն հին ծերերն ասելով թէ . Մհեր անունով դաժան եւ չարաբարոյ հրէշ մէկ մը կայ եղբր . որ իւր աշխարհաւեր չարութիւնը եւս աւելի Հայաստանի վրայ չտարածելու համար, վերնասաստ հըրամանով մը ինքն եւ իւր ձին այն դռնէն ներս կը փակուին . ուր կան կենդանի եւ աշխարհիս վախճանին կատաղի զօրութեամբ եւ մոլեգնութեամբ ձին հեծած դուրս պիտի ելնէ այն դռնէն եւ աշխարհ ամենայն տակն ու վրայ պիտի ընէ :

Այս աւանդութեամբ խօսուած առասպելն գիտես թէ ճիշտ կուգայ մեր բազմերախտ խորեհնացոյ Արտաւազդայ

վրայ գրած առասպելաբանութեանը (Խորենացի գիրք Բ. գլ. լուխ Կ. Ա.) որով կրնայ մտածուիլ թէ դարեր վրայ անցնելով Արտաւազդ անուան Մհերի փոխուած ըլլայ եւ ինքն Արտաւազդն ալ յատուկ մէկ յիշատակաց արժանի գործմը գործած լինի այս կողմեր կամ այս դռնաձեւ արձանադրութեանս վրայ . որուն վրայօք հայրենագէտ հնախոյզներուն թող մնայ մրտածել :

Ու եց հարիւր քայլաչափ հեռի կրնայ այս տեղէն բռն Ալիի ըսուած բարձրագիր բարագագաթ տեղն . որն որ շատ սիրուն եւ աչաց զուարճալի տեսարան մի ունի . ցորեկուան ժամը ընկնէր, երբ զմայլած այս դարաբլրոյս վրայ կը դիտէի բնութեան չքնաղ տեսարանն : Վանայ գեղեցկագիր այգեստանն հարաւային կողմանէ ճառախիտ անտառմը կը ձեւանայ տեսակաւոր ծառոց տերեւներով, մեծատարած եւ վսեմ . Հիւսիսային կողմանէ քառակուսի. մեծ, վարուցանի համար առատաբեր արտեր դիւր դաշտի վրայ . Թրոնց մէջն ալ եզնաւարներ եւ ակօսաբեկ եզինք աշխատաւոր երկրագործներով ժրջան մը ղուէի նման անյագ կաշխատին , գեղջուկ եղանակաւ սրտաշարժ ձայներնին ձգելով . արեւմուտքէն Շամիրամայ բարձրագիր բերդն իւր հիւսիսային կողմ ցոյց կուտայ առ ի շեղ տեսքով մը . ուրկէ սակաւ ինչ ալ ի խոնարհ Բզնունեաց ծովու արծաթափայլ շողշողումն զմայլեցուցիչ տեսքով նկատող աչքերու կը զարնէ , որուն վրայ ուղղադիմ նայօղն կարծէ թէ հազարաւոր լուսեղէն Մետէորայք եռալով կը խաղան նոյն մանրածածան ալեացը մէջ :

Հատ ցանկացայ եւ արժան եւս էր, որ ըստ Եւրոպական Ամազորաց տեսարանացոյց տեսկերներով նկարուէր աս ուստի նման շատ երեւելի տեսարաններ եւ հոյակապ շէնքեր հայրենակարօտ աչքերու դիմաց . բայց ի՞նչ օգուտ . ըստ ասից կարօտութիւն զայր խոնարհեցուցանէ

Ու երգրեալ տեղերէն քիչ մը վեր յԱյնկուսներ Եկեղեցւոյ վրան նայօղ հիմունքը լայնանիստ ապառաժ բարձր բլրակ մի կայ . Այս բլրոյս գագաթէն, մօտեւս հետաքրքրու-

Թեան արժանաւոր շատ բաներ դուրս եկան . եւ ետեւէ կը շարունակի՝ եթէ յատուկ խուզարկութեամբ գործն յառաջ տարուի :


Մինչեւ հիմայ պատահմամբ դուրս եկածներն են՝ 3 ոտնաչափ քառակուսի սրբատաշ շատմը կրային քարեր . ջրի ագուգաններ նոյն սպիտակ քարերէն փորուած . տարբեր տեսակ խեցեղինաց կտորուանք . մեծափոր կարասներ, որոնք կը պարունակեն 300 յօխայէն աւելի հեղանիւթ . մեծամեծ գերաններու ածուխ դարձած գլուխներ, մեծաքանակ աղիւսներ . փրտեալ երկաթի շատ կտորուանք . պղնձեայ զարդերու վարպետաշէն հատուածներ . որոնք կը կարծուին թէ մեծ գահաւորակի թեւեր եղած լինին . սանդխաձեւ տաշուած քարէ աստիճաններ եւ այլն :

Այս ամէն նշաններէս որոշակի կիմացուի թէ՛ այս դարաբլուրս մեր նախնեաց ժամանակին մէկ անառիկ ամուր դըղեակ մը եղերէ, իւր վերին գագաթի չափաւոր մեծութեամբ տարածութիւն ամուր պարսպով մը շրջապատած . Սոյն բլրէս երեք փարսախաչափ հեռու բարձր դրից վրայ ապրիւր մի կայ , որուն համար աւանդութեամբ կսեն թէ՛ ագուգաներով այս բլրոյս գլուխն կ'արարանայ եղեր առաջ, բայց հիմայ նոյն ծանրան անգտանելի կորուերէ :

Բլրոյն արեւելեան կողմը փորածոյ մեծ այր մի կայ՝ որն որ Համիրամ Թագուհոյ մեծագործութեանց կարէ բարեւել . երկայն լայն եւ մարդուչափ բարձր միջոցով բարաժայտի վերին կողմէն ծածկած վար իջերէ , միանգամայն ոտ ոտ ալ աստիճաններ թող տալով . անկէջ ետեւ ալ ընդարձակ այր մը ձգած է դէպի բլրոյն տակեր տարածուելով . որուն առաստաղը շարունակ ջրոյ քարաղետալ կաթիլներով անհաւասարութիւն մը տալցած է . այնպէս՝ որ կարծի թէ փայտէ գերաններով ծածկուած տան մը առաստաղէ : Այս մեծագործ այրիս համար շատ հաւանական է կարծել թէ՛ նոյն անառիկ դղեկի սառնեռուէն եղած ըլլայ . որուն մէջ տարոյն մինչեւ վերջ ըստ քառակամին սառն կրնայ պահուիլ անփնտս :

Իսկ ինքն դղեակ կերեւի թէ իւր վերջի վախճանն հրե-
կիցութեամբ առած պիտի լինի. որովհետեւ ամէն բանէն ա-
ւելի ածխոյ կտորվանք դուրս կուգան բրածոյ հողոյն տակէն:

Ո՛վ դիտէ ինչ հայկերան դիւցազունք այս բլրոյս վրայ ա-
թու դրած բազմած են՝ Բզնունեաց ծովու եւ բոլոր Վանայ
դաշտի ազնիւ տեսարանն դիտելու, որոնց ոչ հետքն մեզի
ծանօթ է հիմայ եւ ոչ անունինն:



Դ • ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵՈՒՆՑ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔ

Ղաաքինութեան քողին տակը ծածկուած չարութեանը
կեղծաւորութիւն եւ միանգամայն սրբապղծութիւն կըսուի.
ասանկ մոլութեան մը տէր եղող մարդուն պատկերը տեսնող
պատկերահանը՝ ամենաչար սատանային ճշտ պատկերը տեսած
ըլլալուն անտարսկոյս պէտք է ըլլայ. որն որ թէ Աստուծոյ
եւ թէ մարդկանց Գլխաւոր թշնամին է:

Եւ եմ ըսողին Եսութիւնը իր անձին նախատինք է:

Իսողդը շատ անգամ անարժանից գիրքը կիրթայ կիյնայ
առ ՚ի արհամարանս եւ առ ՚ի զիջումն ամբարտաւանութեան
արժանաւորաց:

Ս՝արդս՝ բաւական է որ հացի սով ըլլալիքին լուրը ան-
գամ մը լսէ՝ եւ կամ թէ խնայողութեամբ կերցընեն իրեն
հացը. ալ բողբոջին իր անորժակը կը բացուի, ու սովորակա-
նէն աւելի կուտէ ու կուտէ չյագենար բայց թէ որ առա-

տութիւն ըզայ , բնական է որ քիչ մը բան ուտելով կը յագենայ . եւ անոր չարիւտը եւ միանգամայն կուշտ ուտելովը՝ առատութիւնն ալ շարունակելու վիճակին մէջ կը մնայ . ահա այս է տաճկիրէն (պէրէքէթ) ըսուած բառին իմաստը :

Երբանկութեան յարգը ճանչցընել տուող քաղցր ու ցանկաբի ընդը՝ թշուառութիւնն է :

Ըգահ ազնուականը , իր կծուութիւնը չյայտնելու համար պատկառանաց երկրւղ կը կրէ , եւ չխայտառակուելու համար , այս կողմանէ ամենուն հետ միշտ զգուշութեամբ կը վարուի :

Ինչպէս որ արծաթը փորձաքարին քսելով անոր ինչ աստիճան արժէք ունենալը կամ բարոյնն կապար ըլլալը կրմայուի , ասանկ ալ մարդս աղքատութեան կամ սրիշ որ եւ իցէ փորձութեան մը մէջ ինկած ժամանակը , իր բարեկամներուն արժէքը կրմանայ . երանի թէ յառաջուց իմանալուն ճամբան գիտնայ՝ ու սուտ բարեկամը ճշմարտի , եւ ճշմարտը սուտի տեղ դնելով չխաբուի :

Տ. Կ. ԳԱԼՓԱԿՃԵԱՆ

ԱՌԱԿ

Պատիւ է- Արեւիկ :

Խիստ ծեր պառաւմը աղքատ
Հաւնոցն ունէր մէկ որձակ .
Որ կէս գիշեր գեռ չեղած ,
Սուր անուշակ ձայն ձրգած
Կարթընցընէր ըզնա միշտ :
Չար աղախինմ եւս ունէր ,
Որ կըսիրէր ծուլութիւն ,
Հոգ չէր ընել վեր ելնել ,

Իւր ելերանքը մանեւ.

Հալած մաշած կը գործէր

Սրբոյ ցաւէն կը մարէր.

Նայեց որ ալ ճար չիկայ,

Քանի որ ինք ծուլանայ,

Պառւոյն խօսքեր կիստանայ :

Եւ թէ հաւիկա այս խեղդեմ.

Զիս այս ցաւէն կազատեմ,

Զայնը չէլնար մունջ լըռիկ

Աչերս կառնուն նինջ քաղցրիկ :

Եւս վատ խորհուրդըս խորհեց,

Բայց չարաչար սխալեց.

Հսկող պառաւըն այն ու ժիր

Հաւուն տեսաւ կորսուիլ,

Ինքն ալ ժամեր կորսնցուց :

Գիշեր ի վեր կը չլռէր

Շատ հրսկելէն քուն չունէր :

Իր գործըն եղաւ աղախնոյն,

Միշտ փախցընել քաղցրը քուն :

Երբ այս տեսաւ աղախին,

Վայ կը կարգար իւր անձին.

Ըրած գործէն զըղջացած

Մոխիր կուտար իւր գըլխին :

Սա օրինակ այն մարդուն

Որ կը սիրէ ծուլութիւն,

Չար խորհուրդներ խորհելով

Ալէկ ձրգած գէշ կընտրէ.

Հերիք մօլիս է՝ տըխմար

Փորձանք կուգայ չարաչար :

Արտէն Յ. Թօխմախեանց աշակերտ

Ժառանգաւորաց Վարժարանի :

Ե . ԹԱՆԴԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՈՒԹԵԱՆՑ

ՔՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ես Տուպան նստեալ ի դադաթ տարին,
 Ի բրեւ պահապան Հայոց աշխարհին,
 Գիշեր եւ ցիւրեկ կոչեմ եւ ողբամ,
 Իսկ Հայք զիս թողեալ, պաշտեն օտարին.
 Ո՛ւր է Հյ, ո՛ւր է Հայ, ո՛ւր է Հայ, որ ասէ՛ վայ՛ վայ՛ .
 Կորուսեալ զգահ, զայլսօն եւ թագ,
 Այրի մնացի, անզարդ, անպսակ,
 Մօր յանկողին զանազան արանց,
 Եղէ անպատիւ ես տեսակ տեսակ. Ո՛ւր է Հայ, եւ այլն .
 Զիս թողին անտէր, եղեն ցիր ու ցան,
 Հայաստան մնաց այլոց ապաստան,
 Թշնամիք զնա կոխան արարին,
 Վէ՛մք հիման նորա, տէ՛ս թէ ո՛ւր հասան . Ո՛ւր է Հայ, եւ .
 Արուսեակ բախտիս յանդուռնդ իջաւ,
 Ճրագ փառաց իմոց ՚ի հողմոյ շիջաւ,
 Որդիքն իմ՝ նման անմուռնի փառանց,
 Իսպանդ մահու տարան դահիճաւ. Ո՛ւր է Հայ, եւ այլն .
 Գարունն իմ կորոյս զիւր տաք եղանակ,
 Չերեր զըւշան, փարփ եւ մանուշակ,
 Սէյեադ, արիւն իմ սառուցեալ մնաց,
 Զի ո՛չ ծագեցին Լուսին Արեգակ.
 Ո՛ւր է Հայ, ո՛ւր է Հայ, ո՛ւր է Հայ, որ ասէ՛ վայ՛ վայ՛ .

ՊԵՏՐՈՍ . Տ . ՅՈՎԱԿԻՄՈՆ ՄԱԴԱԹԵԱՆՑ
 ՇԱՄԱԽԵՑԻ ՍԵՑԱԿԻ ՄԱԿԱՆՈՒԱՆԵԱՆ .

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ ԴՈՐԾԱՆԱԼԷ.

ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ.

ՎԱՆ, Մկրտիչ Տ. Ատոմեան 'ի գրանոցի վասպուրական
Արժուոյն :

ԱՆՐԻՆ, Խաչատուր Խան Տ, 'Ներսիսեանց եւ միանգամայն
գործակալ Տարօնոյ եւ Ռուսաստանի Հայոց :

ԲԱՂԷՇ, Մ, Ղարիպճան Աղա Մ, Շողիկեանց :

ՏՐԱՊԻԶՈՆ, Լղաճան Աղա Յովհաննիսեան :

ՊՕԼԻՍՊ, Յակովբ Աղուանեան վանեցի 'ի Պալթաճի Խան

Զմիտիտին, Պ, Սարգիս Տէր Մարգարեան վանանդեցւոյ :

ԲԵՐԻԱ, Յովհաննէս Աղա Մխաբեան :

ՍԱԼԱՄԱՍՏ, Յակովբ Միրզայեան Մէլք Յակովբեանց, մի-
անգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց :

ԳԻՆ ՏԱՐԵԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի վան, 'ի Կարին, 'ի Մուշ, 'ի Բաղէշ, 'ի Տրապիզոն 2 ու կէս
Օսմանցի քսան ղուրուշնոց արծաթ Մէճիտիէ :

Ի Պոլիս, 'ի Զմիւռն, 'ի Բերիս, երեք արծաթ քսան
ղուրուշնոց Մէճիտիէ :

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան, այսինքն 'ի Տփլիս, Սև-
ղէքսանդրպօլ, 'ի Դաւլթեժ եւ այլն, չորս արծաթ Մանէթ :

Գին միոյ տետրակի 6 ղուրուշ : Ճանապարհին ծախքը
Խմբագիրը պիտի վճարէ :

ԲՈՎԱՆՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԵՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԸԷՆ ՀԱՐՑ

Եղիշ Վախագիտ Պատմագիր Հայոց 251

ՀԱՆԴԻՄԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱԸԷՆ ԱՌԱՔԻՆԵԱՅ

Աբգար Արշակունի Նախահապ Դիցակ Արայ

Հայոց 257

Նախ . Յիսախան Հարբեհասեր ռն 266

ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱԸԽԱՐՀԱՅ

Վահագն Այրի 272

ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

Բարյակն Առաջ 275

Առաջ . Պատմ . Ե . Աշխի 276

ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

Պեպրոս Պէյ Մարթիանյ

« Բնար Հայաստանի » 278